# Կարիքների գնահատում. Հարցաշար

Շնորհակալությո՜ւն այս հարցաշարին ձեր մասնակցությանը համար: Ձեր պատասխանները կօգնեն մեր Ծերացման հարցերով տարածքային գործակալությանը (Area Agency on Aging, AAA) հասկանալ մեր համայնքում տարեց չափահասների և նրանց խնամողների կարիքները: Ձեր պատասխանները գաղտնի կպահվեն և չեն կիսվի Ձեր AAA-ից և Մեծահասակների գործերի գործադիր գրասենյակից (Executive Office of Elder Affairs) դուրս:

1. **Արդյո՞ք այս հարցաշարին պատասխանում եք (ա) ձեր անունից որպես տարեց չափահասի, թե (բ) որպես խնամողի՝ ձեր խնամած տարեց չափահասի անունից *(ձեր խնամքը ստացողի)*:**
   - ❑ Ինքս իմ անունից → *ԱՆՑԵՔ հաջորդ էջի 3-րդ հարցին:*
   - ❑ Խնամող




*Միայն խնամողները պետք է լրացնեն 2-րդ հարցը: Եթե ինքներդ ձեզ համար եք պատասխանում, խնդրում ենք անցնել 3-րդ հարցին:*

2. **Ո՞ր որոշակի աջակցությունները կօգնեն ձեզ որպես խնամողի:** *(Ընտրեք բոլոր կիրառելիները)*
   - ❑ Կարճատև ազատում խնամքից՝ Ժամանակավոր ազատում խնամքի մատուցման պատասխանատվություններից:
   - ❑ Աջակցող խմբեր՝ Աջակցող խմբերի հասանելիություն հուզական և սոցիալական աջակցության համար:
   - ❑ Ֆինանսական օգնություն՝ Օգնություն խնամքի մատուցման հետ կապված ծախսերի հարցում:
   - ❑ Մարզում և կրթություն՝ Խնամքի մատուցման հմտությունների վերաբերյալ մարզում, թուլամտության (դեմենցիա) խնամք և տեղեկություններ որոշակի վիճակների կառավարման մասին:
   - ❑ Բժշկական աջակցություն՝ Օգնություն խնամառուի բժշկական կարիքների կառավարման համար, ներառյալ՝ առողջապահական մասնագետների մատչելիությունը:
   - ❑ Իրավական օգնություն՝ Օգնություն իրավական հարցերի համար, որոնք կապ ունեն խնամքի մատուցման հետ, ինչպիսիք են լիազորագիրն ու խնամակալությունը:
   - ❑ Փոխադրական ծառայություններ՝ Փոխադրության հասանելիություն խնամառուի բժշկական ժամադրությունների և այլ կարիքների համար:
   - ❑ Տան բարեփոխումներ՝ Օգնություն տունը խնամառուի համար ավելի անվտանգ և մատչելի դարձնելու նպատակով:
   - ❑ Խնամքի համակարգում՝ Օգնություն խնամառուի համար խնամքի և ծառայությունների համակարգման նպատակով:
   - ❑ Հոգեկան առողջության աջակցություն՝ Հոգեկան առողջության ծառայությունների հասանելիություն խնամողի սեփական բարեկեցության համար:
   - ❑ Տեխնոլոգիական աջակցություն՝ Օգնություն տեխնոլոգիայի օգտագործման համար՝ խնամառուի խնամքին հետևելու և նրան խնամելու համար:
   - ❑ Տեղեկություններ և աղբյուրներ՝ Խնամքի մատուցման և հասանելի աղբյուրների վերաբերյալ տեղեկությունների և աղբյուրների մատչելիությունը:
   - ❑ Տնային խնամքի ծառայություններ՝ Տնային խնամքի մասնագիտական ծառայություններից օգտվելու հնարավորություն՝ խնամքի մատուցման առաջադրանքներին օգնելու համար:
   - ❑ Սննդային աջակցություն՝ Օգնություն խնամառուի ճաշերի ծրագրման և պատրաստության համար:

- ❑ Աշխատանքի և կյանքի հավասարակշռման աջակցություն՝ Աղբյուրներ, որոնք կօգնեն խնամքի մատուցման պատասխանատվությունները հավասարակշռել աշխատանքի և անձնական կյանքի հետ:
- ❑ Համայնքային աղբյուրներ՝ Տեղեկություններ խնամողներին հասանելի համայնքային աղբյուրների և ծառայությունների մասին:
- ❑ Այլ (Խնդրում ենք հատկորոշել)՝ ___________________




*Եթե պատասխանում եք որպես խնամողի, խնդրում ենք լրացնել հարցաշարի մնացած մասը ձեր խնամած անձի (խնամառուի) տեսանկյունից, ներառյալ՝ նրա ժողովրդագրական տվյալները:*

**3. Կարիքներ**

*Խնդրում ենք մի պահ տրամադրել ստորև բերված ցուցակը նայելու և տարիքի առաջացման հետ կապված ձեզ (խնամառուի) համար ամենից կարևոր կարիքները նշելու համար: Յուրաքանչյուր կատեգորիայի տակ թվարկված օրինակները չեն ներառում բոլոր հնարավոր օրինակները, այնպես որ դուք կարող եք ընտրել կատեգորիան, նույնիսկ եթե օրինակների ցանկում չեք տեսնում ձեր (խնամառուի) կոնկրետ խնդիրը:*

*Ընտրեք ձեզ (խնամառուի) համար կարևոր բոլոր կիրառելի կարիքները՝*

- ❑ Ծառայությունների հասանելիություն
  - Օրինակ՝ Սննդի/Լրացուցիչ սնուցման աջակցության ծրագրի (Supplemental Nutrition Assistance Program, SNAP) նպաստների և ֆինանսական ծառայությունների հետ կապված օգնություն ստանալը և բժշկական ապահովագրության համար դիմելը:
- ❑ Մատչելի առողջապահություն
  - Օրինակ՝ մատչելի առողջապահական ծառայություններից օգտվելը, ապահովագրությունը, դեղատոմսերի ծախսերը կառավարելը:
- ❑ Առողջապահության հասանելիություն
  - Օրինակ՝ բժիշկ գտնել, մատչել առողջապահական ծառայությունների, հաճախել ընկնելու կանխարգելման դասընթացների, ուսումնասիրել այլընտրանքային բժշկության տարբերակները և ընդունել բժշկի տնային այցեր:
- ❑ Մատչելի բնակարան
  - Օրինակ՝ մատչելի բնակարան գտնելը, դրամական նպաստով բնակարանների սպասման ցուցակներում ընդգրկվելը և վարձակալական օգնության հասանելիությունը:
- ❑ Բնակարանի մատչելիություն և պահպանում
  - Օրինակ՝ մատչելի բնակարան գտնելը և գույքի վերանորոգման և պահպանման օգնությունը:
- ❑ Տնային աջակցություն անկախության պահպանման համար
  - Օրինակ՝ օգնություն ծերությունը տանն անցկացնելու հարցում, օգնություն առօրյա կենսագործունեության հետ կապված հարցերում (օրինակ՝ լողանալը, զուգարանը, հագնվելը, սնվելը, քայլելը, հարդարանքը), տան և գույքի պահպանումը (ձյան հեռացում, սիզամարգի խնամք, տերևների հեռացում), բնակարանային բարեփոխություններ, ընդհանուր առաջադրանքներ, հավասարակշռության և շարժունակության խնդիրներ և անհրաժեշտ սարքերի ձեռքբերում:
- ❑ Երկարաժամկետ ծառայություններ և աջակցություններ
  - Օրինակ՝ տնային խնամքի ծառայություններից օգտվելը, երկարաժամկետ խնամքի (Long-Term Care, LTC) հաստատությունների անձնակազմի համալրումը, գյուղաքաղաքներում աջակցությունը և ավելի շատ դեպքերի կառավարումը:

- ❑ Օգնություն այլ ծախսերի կառավարման համար
  - o Օրինակ՝ օգնություն ոչ բնակարանային և ոչ առողջապահական ծախսերի հարցում, ինչպիսիք են հարկերը, կոմունալ ծառայությունները և սնունդը:
- ❑ Իրավական ծառայություններ
  - o Օրինակ՝ գտնել իրավական խորհրդատու՝ լուծելու մտահոգությունները եկամուտների և հանրային նպաստների, առողջության պահպանման, երկարաժամկետ խնամքի, սնուցման, բնակարանային, կոմունալ ծառայությունների, պաշտպանական ծառայությունների, բռնության, անտեսման, տարիքային խտրականության և խնամակալության պաշտպանության վերաբերյալ:
- ❑ Հոգեկան և վարքային առողջության աջակցություն
  - o Օրինակ՝ գտնել հոգեկան առողջությանը վերաբերող դասեր և ուսուցում, խորհրդատվություն, օգնություն ընկճվածության (դեպրեսիայի), տագնապի և սթրեսի հարցում, լուծում գտնել ալկոհոլի և թմրամիջոցների չարաշահման:
- ❑ Սննդային աջակցություն
  - o Օրինակ՝ առողջ սննդի հասանելիություն, օգնություն սննդի պատրաստման կամ առաքման հարցում, սննդային անապահովության հարցի լուծում:
- ❑ Անվտանգություն և ապահովություն
  - o Օրինակ՝ հավասարակշռությունը և ընկնելը կանխարգելելու համար տան բարեփոխումներ, բռնության, անտեսման և շահագործման դեմ պայքարի հարցում աջակցություն, հանրայինն անվտանգություն և համայնքային անվտանգություն:
- ❑ Փոխադրության մատչելիություն և հասանելիություն
  - o Օրինակ՝ ժամադրությունների կամ սոցիալական գործունեության համար փոխադրամիջոց գտնելը, ավելի շատ ավտոբուս/ավտոմեքենա կիսելու հնարավորություններ, օգնություն հանրային փոխադրամիջոցների հարցում և փոխադրումներ շաբաթավերջերին:
- ❑ Աշխատուժային զարգացում
  - o Օրինակ՝ աշխատանք գտնել, աշխատանքի ճկուն հնարավորություններ, վերապատրաստման հնարավորություններ և լավ վարձատրվող աշխատանք:
- ❑ Օգնություն սոցիալական մեկուսացման լուծման համար
  - o Օրինակ՝ ընկերակցություն գտնելը, մատչելի տեխնոլոգիաների հասանելիությունը, հեռախոսային/ինտերնետային ծրագրերը, կանոնավոր կապերը և պաշտոնական և ոչ պաշտոնական աջակցությունները:
- ❑ Ժամանցի, հանգստի և սոցիալական կապերի հնարավորություններ
  - o Օրինակ՝ գտնել և մասնակցել սոցիալական միջոցառումներին, ծրագրերի մասին տեղեկություններ, վայրերում/թանգարաններում իջեցված դրույքաչափեր, տարեցների համար բացօթյա տարածքներ և սոցիալական կապեր ստեղծել գյուղական համայնքներում:
- ❑ Քաղաքացիական ներգրավվածություն / Կամավորության հնարավորություններ
  - o Օրինակ՝ գտնել կամավորության հնարավորություններ, ներգրավվել տարեցների համայնքում և մասնակցել թաղամասի միջոցառումներին:
- ❑ Ուսուցման և զարգացման հնարավորություններ
  - o Օրինակ՝ կրթական ծրագրեր գտնելը, նոր հմտություններ սովորելը (օրինակ՝ էլեկտրոնային նամակներ, ինտերնետ, հավելվածներ և այլն օգտագործելը) և թվային տեխնոլոգիաները յուրացնելը:
- ❑ Ակտիվ մնալը / Քաջառողջության խթանում
  - o Օրինակ՝ առողջ ծերացման վերաբերյալ դասեր գտնելը, ֆիզիկական քաջառողջության մասին տեղեկություններ, ամրակազմության (ֆիթնես) ծրագրեր, տարեցների համար մարզանքի դասեր և խնամողների համար աջակցություն:

- ❑ Ծերացման և տարիքային խտրականության հետ կապված լուծումներ
  - ○ Օրինակ՝ բացասական կարծրատիպերի, նախապաշարմունքների և տարիքային խտրականության կանխում:
- ❑ Լեզվի / հաղորդակցության խոչընդոտների հաղթահարում
  - ○ Օրինակ՝ բանավոր թարգմանչական/թարգմանչական ծառայություններ գտնելը, տարբեր լեզուներով ծառայությունների և աղբյուրների մասին տեղեկություններ գտնելը և Անգլերենի որպես երկրորդ լեզու (English as a Secod Language, ESL) դասերի գրանցվելը:
- ❑ ԼԳԲՏՔԻԱ+ աջակցություն
  - ○ Օրինակ՝ գտնել մատակարարներ, ովքեր հասկանում են Լեսբուհիների, Գեյերի, Բիսեքսուալների, Տրանսգենդերների, Քվիրների/Անվստահիների, Ինտերսեքսների, Ասեքսուալների/Դաշնակիցների և ինքնության այլ խնդիրներ, համարկվել (ինտեգրվել) համայնքին և աջակցություն ստանալ կողմնակալության դեմ պայքարելու համար:
- ❑ Հոգևոր կյանքի աջակցություն
  - ○ Օրինակ՝ գտնել հավատքի հետ կապված միջոցառումներ, զարգացնել հոգևոր աճի հնարավորությունները և լուծում գտնել անձամբ իրականացվող բաց թողնված ծառայություններին:
- ❑ Այլ (Խնդրում ենք հատկորոշել)՝ ________________

**4. Կարիքների դասակարգում**

*Խնդրում ենք դասակարգել վերևի ցանկում ձեր նշած կարիքներից 3 գլխավորները՝ ելնելով ձեզ համար դրանց կարևորությունից (խնամառու):*

*Կարիքների դասակարգման համար, վերադարձեք 3-րդ հարցի ցանկին, որը հենց նոր լրացրիք և գրեք «1» ձեզ (խնամառուի) համար ամենից կարևոր կարիքի կողքին, «2» հաջորդ ամենից կարևոր կարիքի կողքին և «3» երրորդ ամենից կարևոր կարիքի կողքին:*

**5. Հետևյալներից ո՞րը ներկայումս կիրառելի է ձեզ (խնամառու):** *(Ընտրեք բոլոր կիրառելիները)*

- ❑ Բռնության, անտեսման կամ շահագործման հետ կապված խնդիրների փորձ
- ❑ Ապրում է Ալցհեյմերի հիվանդությամբ կամ դեմենցիայով
- ❑ Հիշողության կամ մտածողության հետ կապված խնդիրներ
- ❑ Մշակութային կամ սոցիալական միջոցառումների հասանելիության կարիք ունի (օրինակ՝ մշակութային միջոցառումներ, կրոնական ծառայություններ, սոցիալական խմբեր)
- ❑ Ապրում է տեսողության կորստով
- ❑ Ապրում է Լսողություն կորստով
- ❑ Ապրում է ֆիզիկական հաշմանդամությամբ (ներառյալ՝ շարժունակության խանգարումներ և ֆիզիկական առողջության քրոնիկ խնդիրներ)
- ❑ Թույլ կամ վատառողջ է
- ❑ Թոռներ մեծացնող տատիկ կամ պապիկ է
- ❑ Ունի բնակարանային խնդիրներ (օրինակ՝ վարձակալական խնդիրներ, կյանքի ոչ անվտանգ պայմաններ)
- ❑ Հաճախ միայնակ կամ մեկուսացված է զգում (օրինակ՝ սահմանափակ սոցիալական կապեր, ընկերակցության բացակայություն)
- ❑ Իրավական ծառայությունների կարիք ունի (օրինակ՝ օգնություն բնակարանային, պետական նպաստների, լիազորագրի և իրավական խորհրդատվության հարցերում)
- ❑ ԼԳԲՏՔԻԱ+ համայնքից է
- ❑ Ունի մտավոր կամ հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ (օրինակ՝ տագնապ, ընկճվածություն (դեպրեսիա), սթրես)
- ❑ Ճաշերի կամ սնուցման հարցում օգնության կարիք ունի (օրինակ՝ ճաշ պատրաստելու դժվարություն, կերակուր առաքելու անհրաժեշտություն)

- ❑ Բնակվում է գյուղական տարածքում (ծառայությունների սահմանափակ հասանելիություն, հեռու տեղակայում)
- ❑ Ունի զբաղվածություն կամ աշխատանքի հետ կապված կարիքներ (օրինակ՝ օգնություն աշխատանք փնտրելու հարցում, աշխատավայրի հետ կապված հարմարություններ)
- ❑ Այլ (Խնդրում ենք հատկորոշել)՝ ____________________

**6. Ո՞ր ավանում/քաղաքում եք դուք *(խնամառուն)* բնակվում:**

________________________________________

**7. Ո՞րն է ձեր *(խնամառուի)* Տարիք:**

________________

**8. Ինչպե՞ս կբնութագրեք ձեր *(խնամառուի)* գենդերային ինքնությունը:** *(Ընտրեք բոլոր կիրառելիները)*

- ❑ Տղամարդ
- ❑ Կին
- ❑ Ոչ բինար, գենդերի չհամապատասխանող կամ գենդերքվիր
- ❑ Չգիտեմ
- ❑ Վերևում նշված չէ (Խնդրում ենք հատկորոշել՝ _________________________
- ❑ Նախընտրում եմ չասել

**9. Ո՞րն է ձեր *(խնամառուի)* ցեղը կամ ազգությունը:** *(Ընտրեք բոլոր կիրառելիները: Նշում, կարող եք մեկից ավելի խումբ տեղեկագրել:)*

- ❑ Սպիտակ
- ❑ Սև կամ Աֆրոամերիկացի
- ❑ Ամերիկյան հնդկացի կամ Ալյասկայի բնիկ
- ❑ Ասիացի
- ❑ Հավայան կամ խաղաղօվկիանոսյան կղզիների բնիկ
- ❑ Միջինարևելցի կամ Հյուսիսաֆրիկեցի
- ❑ Իսպանախոս կամ լատինամերիկացի
- ❑ Ինչ-որ այլ ցեղ կամ ազգություն՝ _________________________

**10. Տանը դուք *(խնամառուն)* անգլերենից բացի այլ լեզվով խոսո՞ւմ եք:**

- ❑ Այո
- ❑ Ոչ

**11. Եթե այո, ո՞րն է այդ լեզուն:**

- ❑ Իսպաներեն
- ❑ Պորտուգալերեն
- ❑ Չինարեն (ներառյալ՝ Մանդարինը և Կանտոներենը)
- ❑ Ֆրանսերեն
- ❑ Հայիթյան կրեոլ
- ❑ Վիետնամերեն
- ❑ Իտալերեն
- ❑ Ռուսերեն
- ❑ Արաբերեն
- ❑ Կորեերեն
- ❑ Այլ՝ ________________________________

**12. Որքա՞ն լավ եք դուք *(խնամառուն)* անգլերեն խոսում:**

- ❑ Շատ լավ
- ❑ Լավ
- ❑ Ոչ լավ
- ❑ Բնավ

**13. Արդյո՞ք ձեր *(խնամառուի)* ընտանիքի տարեկան ընդհանուր եկամուտը $20,000-ից նվազ է:**
*(Անպարտադիր)*

- ❑ Այո
- ❑ Ոչ
- ❑ Նախընտրում եմ չպատասխանել

**14. Դուք *(խնամառուն)* MassHealth-ի անդա՞մ եք ներկայումս:**

- ❑ Այո
- ❑ Ոչ
- ❑ Չգիտեմ

**15. Դուք *(կամ ձեր խնամառուն)* ունե՞ք որևէ լրացուցիչ ասելիք կամ մտքեր, որոնք կցանկանայիք կիսել մեզ հետ:**

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

**Հավելյալ տեղեկությունների, աղբյուրների կամ Ծերացման հարցերով տարածքային գործակալության (AAA) հետ կապվելու համար, խնդրում ենք կապ հաստատել MassOptions-ի հետ 800-243-4636 հեռախոսահամարով կամ այցելել նրանց կայքը՝ [www.massoptions.org](http://www.massoptions.org):**